



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Պատույթի Տանկավազա Կանխատեսում*

*Վարչակարգության Տիպի Կանխատեսում Կարգադրարի զանազան
Վտարիկի Ֆիզիկոպոլիտիկա*

Հետազոտող ուսուցիչ՝ *Առ. Ֆիլյա Վարդանիսի Կարապետյան*
անուն, ազգանուն

ՎՆԿ Կանխատեսում Կանխատեսում N 1 զարգացում
դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ *Վ. Գամալյան*
անուն, ազգանուն

Բովանդակություն

Ներածություն.....	3
Ֆիզիկական կուլտուրան հանրակրթական դպրոցում.....	4
Դասի կազմակերպման և անցկացման ուսուցչի մանկավարժական վարպետությունը	
Ուսուցչի նախապատրաստությունը դասին	10
Դասի մանկավարժական վերլուծումը	12
Եզրակացություն.....	14
Գրականության ցանկ.....	15

Ներածություն

Ֆիզիկական կուլտուրայի նշանակությունը կյանքի դպրոցական շրջանում կայանում է նրանում, որ ստեղծվի բազմակողմանի զարգացման հիմք, ամրապնդվի առողջությունը և աշակերտների մոտ ձևավորել բազմազան շարժողական կարողություններ և հմտություններ: Այս բոլորը հանգեցնում է օբյեկտիվ նախադրյալների առաջացմանը անհատի ներդաշնակ զարգացման համար: Դպրոցականների լիարժեք զարգացումն անհարին է առանց ակտիվ ֆիզկուլտուրային պարապմունքների: Պարզվում է, որ շարժողական ակտիվության պակասը լրջորեն վատացնում է աճող օրգանիզմի առողջությունը, թուլանում է նրա պաշտպանիչ ուժերը և չի ապահովում լիարժեք ֆիզիկական զարգացում:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում սովորողները ձեռք կբերեն ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նշանակության, առողջ ապրելակերպի կանոնների, օլիմպիական խաղերի, արդարացի խաղի, առաջին օգնություն ցույց տալու կանոնների, ինչպես նաև համագործակցելու, կազմակերպելու և նախաձեռնություն հանդես բերելու կարողություններ:

Ֆիզիկական դաստիարակությունը կնպաստի անձի մտավոր և ֆիզիկական աշխատունակության բարձրացմանը, շարժողական ընդունակությունների մշակմանը, որոնք լայն կիրառություն են գտնում մարդու ամենօրյա գործնական կյանքում:

Ֆիզիկական դաստիարակությունը աջակցելու է նաև սովորողների շրջանում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացմանը՝ ըստ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագիտությունների նախասիրությունների:

Աշխատանքի նպատակն է ֆիզիկական կուլտուրայի դասերի ժամանակ ստեղծել օբյեկտիվ նախադրյալներ, որոնց միջոցով դաստիարակելու ենք համակողմանի զարգացած անձ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Վերջին ժամանակաշրջանում հատկապես խիստ է դրված հանրակրթական դպրոցներում ֆիզիկական դաստիարակության զարգացման ուղիների հարցը: Մասնավորապես, ինչպես գիտնականները, այնպես էլ մասնագետ- պրակտիկները փորձում են բացահայտել, թե ինչպես պետք է լինի ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասը, ինչպիսին են նրա դասավանդման առանձնահատկությունները:

Նախ և առաջ, ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից դասի կարևորագույն տարրերակիչ գիծն է սովորողների ներգրավումը ուսուցիչների հետ համատեղ ստեղծագործական ուսումնական գործունեություն: Ֆիզկուլտուրային ճանաչողական գործունեությունը խթանվում է տարատեսակ խնդիրների առաջադրմամբ, որոնք սովորողները լուծում են համատեղ աշխատանքի ընթացքում:

Զափազանց կարևոր է, որպեսզի սովորողները հասկանան կատարվող վարժությունների իմաստն ու նշանակությունը և դրա հիման վրա ընկալեն տարբեր շարժումներն յուրացման միջոցները: Հենց դա է ինքնուրույնության և ինքնակատարելագործման ուղին: Դպրոցականներին անհրաժեշտ է ոչ միայն ուսուցանել այս կամ այն կարողությունները և հմտությունները, այլև պարտադիր նրանց ուսուցանել սովորեցնել: Ի վերջո առանց ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության դրան հասնելն անհնար է:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդումը հանրակրթական դպրոցում ամրագրված է կրթության մասին օրենքով (1999 թ.): Դպրոցական ուսումնական պլանի կրթական առարկան «Ֆիզիկական կուլտուրա», մյուս առարկաների համեմատ առանձնահատուկ դեր ունի: Հարցն այն է, որ առարկան ուղղված է բուն մարդկային էության բնության ճանաչմանը, ինքն իրեն ճանաչելու վրա:

Միննույն ժամանակ առարկաներն ուղղված են շրջակա աշխարհի ուսումնասիրմանը:

Կասկած չի առաջացնում այն փաստը, որ որքան շատ են աշակերտների գիտելիքները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին, այնքան նրանց մոտ զարգանում է շարժողական գործունեության մտածողական բաղադրիչը, այնքան բարձր են շարժողական կարողությունների և հմտությունների յուրացումը, արդյունքները, շարժողական ընդունակությունների մշակումը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների հանդեպ հետաքրքրության զարգացումը:

Սրանից հետևում է, որ ֆիզիկական կուլտուրայի ոլորտի հատուկ գիտելիքները կոչված են կատարելու կարևոր գործոնի դեր, որն ապահովում է լիարժեք կյանք, կյանքին անհրաժեշտ տարբեր ընդունակությունների լիակատար բացահայտում:

Ցավոք, դպրոցականների ֆիզիկական դաստիարակության պրակտիկայում դեռևս բավարար ուշադրություն չի դարձվում համապատասխան գիտելիքների ձեռքբերմանը: Դա արտահայտվում է և՛ դպրոցական ծրագրում «Գիտելիքների հիմունքներ» բաժնի ժամերի հատկացված ծավալում, և՛ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների պրակտիկ գործունեության մեջ:

Դպրոցականների ֆիզիկական կուլտուրայի տեսական պատրաստվածության անբավարար վիճակի մասին է խոսում մինչ օրս տարածված և բավական պարզունակ պատկերացում «Գիտելիքների հիմունքներ» բաժնի բովանդակության մասին: Հաճախ այն ընդամենը ընդգրկում է տարրական գիտելիքներ հիգիենիայի, անվտանգության տեխնիկայի, օլիմպիական շարժման և այլնի մասին: Չնայած նրա անկասկած օգուտին, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի սահմանափակումը միայն այդպիսի ընդհանուր տեղեկություններով, ստեղծում է սահմանափակ և անգամ կեղծ պատկերացում սովորողների ֆիզիկական դաստիարակության ինտելեկտուալացման բովանդակության մասին: Ուստի կարելի է եզրակացնել, որ «Գիտելիքների հիմունքներ» բաժնի դասավանդման գործընթացը հանրակրթական դպրոցում դեռ հեռու է կատարելությունից:

Մտավոր կարողությունների բարձրացման հարցն իր դրսևորումն ստանալով նախ և առաջ հասարակական արտադրության մեջ, սերտորեն կապված է կրթության հետ, քանի որ հենց դա է աճող սերնդի ինտելեկտի ձևավորման գլխավոր մեխանիզմը (И.В. Стародубцева, 2010; В.К. Бальсевич, 1991; В.С. Гершунский, 1998 և այլք):

Ֆիզիկական դաստիարակության ոլորտում մտավոր կարողությունների բարձրացումը, հանդիսանալով երեխաների ինտելեկտուալ ոլորտի բաղադրամաս, մանկավարժական ներգործությունների միջոցների և մեթոդների հիմնավորում, կազմում է վերջին տարիների գիտական հետազոտությունների զարգացման էական գծերից մեկը: Այդ իմաստով մտավոր կարողությունների բարձրացման հիմնահարցը կարելի է դիտարկել որպես սովորողների մոտ ֆիզիկոլոգիային գիտելիքների հիմքերի ձևավորման գործընթաց:

Հետևաբար, կրթության հիմքի հետագա զարգացումը, գիտելիքների բարձրացումը իրականություն է, որն անհրաժեշտ է որակյալ ձևով իրականացնել նաև աճող սերնդի ֆիզիկական դաստիարակության համակարգում:

Դպրոցական ֆիզիկական դաստիարակության առավել նշանակալից հիմնահարց է «Ֆիզիկական կուլտուրա» ուսումնական առարկայի հիմնախնդրի ուղղվածությունը: Ինչի՞ն պետք է տալ նախապատվությունը՝ առողջարարակա՞ն, մարզակա՞ն, թե՞ կրթական ուղղվածությանը: Այս հարցի քննարկումն արդեն շատ տարիներ իրականացվում է ԱՊՀ երկրներում և մինչ օրս միանշանակ որոշում չի ընդունվել: Ռուսաստանում կրթությունը ժամանակի պահանջներին համապատասխանեցման հարցի քննարկումն ընդգծում է ֆիզիկական դաստիարակության հիմնական բաղադրամասերը, ուր հիմնահարց է համարվել ֆիզիկական կուլտուրայի մասին գիտելիքների համակարգի ձևավորումը: Առարկայի կրթական նշանակությանը ուշադրություն են դարձնում մի շարք մասնագետներ: Մա նշանակում է, որ սովորողների մոտ անհրաժեշտ է նպատակաուղղված ձևավորել խոր և լիարժեք ֆիզիկական վարժություններով պարապելու հետաքրքրություններ և պահանջմունքներ՝ իրենց ֆիզիկական վիճակի, առողջ ապրելակերպի կազմակերպման և այլնի համար: Բնականաբար, դա հնարավորություն կտա տարբեր տարիքի երեխաներին սովորեցնելու շարժողական գործունեության առանձին ձևեր, ինքնուրույն կատարելու տարբեր ֆիզիկական վարժություններ, ձևավորելու շարժումների կուլտուրա: Տարբեր երկրների մասնագետները ուսումնական գործընթացի այդպիսի ուղղվածությունն սկսեցին անվանել «ֆիզիկոլոգիային կրթություն» (И.К. Латыпов, В.И. Лукина, 2010, Ֆ.Գ. Ղազարյան, 2003 թ.):

Գիտելիքների առաջատար դերը, որպես տարբեր տարիքի դպրոցականների ֆիզկուլտուրային կրթության բաղադրամաս, բավական պարզ ընդգծվում է հատուկ գրականության մեջ (Ֆ.Գ. Ղազարյան, Ռ.Ս. Մանուկյան, 2004 թ., В.П. Лукьяненко, 2003, И.В. Еркомашвили, 2008, Ֆ.Գ. Ղազարյան, Ա.Գ. Ստեփանյան, 2010 թ. և այլք):

Այսօր ընդունվում է, որ ֆիզիկական դաստիարակության մեջ պետք է առանձնացնել դասերի երեք տիպեր՝ տեսական (գիտելիքի դասեր), հրահանգչական/մեթոդական և գործնական: Դրանց բովանդակությունը պետք է բնորոշվի որպես հենքային, իրականացվի ֆիզիկական կուլտուրայի կրթական դասերի ժամանակ և ապահովի ընդհանուր միջնակարգ կրթության անհրաժեշտ մակարդակը: Այսպիսի մոտեցման դեպքում, մեր կարծիքով, ուսումնական առարկայի առաջնային բաղադրիչ պետք է հանդես գա համապատասխան գիտելիքների ձևավորումը: Առանց նրանց առկայության անհնար է հասկանալ, իմաստավորել և ճանաչել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի արժեքները:

Ինչ վերաբերվում է մեր երկրի դեռահաս աշակերտներին, ապա, համաձայն սոցիոլոգիական հարցման, նրանց միայն 23 տոկոսը բավարար գիտելիքներ է ստանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառից, իսկ յուրաքանչյուր երրորդ սովորողն իր ստացած տեսական գիտելիքները չի կարողանում կիրառել շարժողական գործունեության պրակտիկայում:

Դպրոցում սովորելու ընթացքում ուսաստանյան աշակերտների 70 տոկոսն անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ չի ստանում ֆիզիկական վարժություններով ինքնուրույն զբաղվելու համար (Урок..., 2010): Համաձայն մեր ուսումնասիրությունների, յուրաքանչյուր երկրորդ հայ դեռահասը նշում է, որ դրա համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ: Այդ դրույթը չեն հերքում նաև ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները, նրանց 64 տոկոսը անհրաժեշտ են համարում ավելացնել դպրոցում ուսուցման ժամանակ սովորողների տեսական պատրաստվածության դասաժամերի ծավալը, օգտագործել ավելի կատարյալ և նորարական մեթոդներ և մոտեցումներ:

Գրականության ուսումնասիրումը ցույց տվեց, որ դեռևս կան առանցքային հարցեր, որոնք խոչընդոտում են դպրոցականների ֆիզիկական դաստիարակության

մտավոր կարողությունների բարձրացման գործընթացին: Դրանց շարքին են դասվում տեսական և ֆիզիկական դաստիարակության առանձնացված դիտարկումը, որտեղ յուրաքանչյուր կողմին համապատասխանում են յուրահատուկ խնդիրներ, միջոցներ ու մեթոդներ, և սրա հետ կապված ինտելեկտուալ և ֆիզիկական գործունեության մեխանիզմների անհամատեղությունը: Որպես հետևանք՝ բացահայտվում է նս մեկ հիմնահարց՝ ուսուցման և դաստիարակության ընթացքում շարժողական և տեսական ճիգերի չափավորման անհրաժեշտ մեծության որոնումը:

Բավական է հիշել, որ 2005 թվականից Հայաստանի հանրակրթական դպրոցների ավարտական դասարաններում քննություն է անցկացվում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից: Սակայն, այս շատ օգտակար նորամուծության ներդրման պրակտիկան իրականանում է ուսումնամեթոդական ապահովվածության դեռևս ոչ լիարժեք ֆոնի վրա: Դրա վառ ապացույցներից մեկն է հանդիսանում հատուկ ուսումնական ձեռնարկի փաստացի բացակայությունը, որում ընդհանրացված և համակարգված կլինեին դպրոցում ֆիզիկական դաստիարակության ուսուցման ողջ դասընթացի հիմնական տեսական տեղեկությունները:

Հայտնի է, որ ֆիզիկական կուլտուրայի դասերը ներառում են տեսական նյութի որոշակի ծավալ, որի համար հատկացված է նվազագույն դասաժամերի քանակ՝ տարեկան 6 ժամ ամեն դասարանում: Դրա համար այստեղ օգնության պիտի գան համակարգչային շնորհանդեսները ֆիզիկական կուլտուրայի դասաժամերի ընթացքում, ձեռնարկները, այլ օրինակային նյութեր: Մեզ հաջողվեց ցույց տալ, որ տեքստային ինֆորմացիայի հասցնելը նվազագույնին նպաստեց ուսումնական նյութի լավագույն ընկալմանը և իմաստավորմանը, սովորողների մոտ պատկերավորության ձևավորմանը, իսկ դրանց հիման վրա նաև հասկացողությունների ձևավորմանը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ էլեկտրոնային շնորհանդեսները և համակարգիչը չեն կարող փոխարինել ուսուցչի կենդանի խոսքին և նրա շփմանը աշակերտի հետ: Ուստի՝ համակարգիչը կարելի է օգտագործել դասերում՝ որպես լրացնող դրվագ:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ֆիզիկական կուլտուրայի կրթական բաղադրիչի լիարժեք իրացումը հնարավոր է միայն տեսական պարապմունքների անցկացման դասային ձևի ներդրմամբ:

Վերջինս գլխավոր պայման է, որը պայմանավորում է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության արդյունավետության բարձրացումը (H.A. Герасимова, 2003, Ֆ.Գ. Ղազարյան, Ա.Գ. Ստեփանյան, 2010 թ.):

Դեռևս Խորհրդային Միության ժամանակներում բազմիցս բարձրացվել է աշակերտների տեսական պատրաստության դասաժամերի ավելացման հարցը, առաջարկվել է ներդնել ֆիզիկական կուլտուրայի երրորդ դասը՝ որպես գիտելիքների դաս:

Եվ այսօր ընդունում են, որ ֆիզիկական դաստիարակության արդիականացումը պետք նախատեսի կրթական ուղղվածությամբ երկու դաս. մեկ դաս առողջարարական-վերականգնողական ուղղվածությամբ, մյուսը տնային հանձնարարություններ, արտադասարանային սպորտային պարապմունքներ (Ю.А. Копылов, 2004, В.К. Бальсевич, 2000, Ա.Ս. Մարտիրոսյան, 2009 թ.):

Ֆիզկուլտուրային կրթվածության կարևոր բաղադրիչ է համարվում նաև գիտելիքների ստուգման գործառույթը: Սկսած 1932 թվականից՝ ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ ծրագրերի, ուսումնամեթոդական ձեռնարկների վերլուծությունը ցույց է տվել սովորողների ֆիզիկական կուլտուրայի վերաբերյալ գիտելիքների գնահատման հարցերի մասին հեղինակների հայացքների բավականաչափ տարբերություններ և հակասություններ:

Ընդհանրացնելով, նշենք, որ մտավոր կարողությունների և տեսական գիտելիքների մակարդակի բարձրացումը սովորող երիտասարդության զլոբալ հեռանկարն է: Ունենալով մի շարք յուրահատուկ առանձնահատկություններ, որոնք տարբերում են նրան դաստիարակչական-կրթական գործընթացի մյուս ձևերից՝ ֆիզիկական դաստիարակությունն ունի եզակի, բայց ոչ մինչև վերջ ուսումնասիրված ներուժ տեսական գիտելիքների ձևավորման և ընդլայնման համար՝ որպես սովորողի անձի մտավոր կարողությունների հիմք: Այն ստեղծում է լայն հնարավորություններ

տվյալ հարցի առավել խորացված հետազոտության համար, ինչը պետք է հանդիսանա հատուկ փորձարարական հետազոտման առարկա:

Ուսուցչի նախապատրաստությունը դասին

Դասին վաղօրոք մանրակրկիտ նախապատրաստվելը ոչ միայն սկսնակ, այլև փորձառու ուսուցչի պարտականությունն է:

Դասը լիարժեք անցկացնելու համար դասին նախապատրաստվելիս, ուսուցիչը պետք է կազմի դասի ծրագիր-մշակումը (պլան-կոնսպեկտ), նախապատրաստի պարապմունքի վայրն ու գույքը, իր օգնականներին, ստուգի իր անձնական գործնական պատրաստվածությունը՝ համաձայն դասի նյութի:

Խորհուրդ է տրվում դասի պլան-կոնսպեկտը կազմել հետևյալ հերթականությամբ.

ա) Սկսել գլխավոր առաջադրանքների որոշումից և ձևակերպումից, որին ենթարկվում է պարապմունքի ամբողջ բովանդակությունը՝ կապելով դրանք նախորդ և հաջորդող պարապմունքների առաջադրանքների հետ:

Դասի առաջադրանքների գործնական արտահայտումը օգնում է ուսուցչին ապահովել ուսուցման գիտակցականության և ակտիվության դիդակտիկական սկզբունքը: Դրա համար էլ պետք է մեծ ուշադրությամբ ու ճշգրտությամբ ձևակերպել դասի խնդիրները և մատչելիորեն ներկայացնել դրանք պարապողներին դասի ներգրավիչ մասում:

Որոշ ուսուցիչների հաճախակի սխալն է՝ դասի խնդիրները բովանդակության հաղորդմամբ փոխարինելը: Օրինակ, փոխանակ ուսուցիչը պլան-կոնսպեկտում գրի և այնուհետև աշակերտներին ներկայացնի առաջադրանքը՝ «տիրապետել թափավազքով բարձրացատկի հրման հիմնական մեխանիզմին», աշակերտներին ասում է. «Այսօր դասին կկատարենք բարձրացատկ՝ թափավազքով»:

Բնականաբար, այսպիսի հաղորդումը կարող է տարբեր ընկալումներ առաջացնել սովորողների մեջ, բայց ամեն դեպքում, այստեղ կբացակայի աշակերտների ուշադրության և ջանքերի կենտրոնացումը՝ ստույգ ուսումնական առաջադրանքը կատարելու համար:

բ) Ընտրել վարժություններ դասի առանձին մասերի համար և որոշել դասի ֆիզիկական բեռնվածությունն ու դրա կարգավորումը: Վարժությունների ընտրությունն սկսվում է դասի հիմնական մասի բովանդակության ձևակերպմամբ:

Դասի ներգրավիչ և եզրափակիչ մասերի բովանդակությունը հարաբերակցվում է հիմնական մասի վարժությունների հետ: Վարժությունների ընտրությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով ֆիզիկական դաստիարակության բոլոր հիմնական խնդիրների լուծումը՝ օրգանիզմի կազդուրումը և ընդհանուր զարգացումը, հմտությունների ձևավորումն ու շարժողական ունակությունների մշակումը:

գ) Կանխորոշել ուսուցման և դաստիարակության մեթոդիկան՝ համառոտագրելով նրա ամենակարևոր առանձնահատկությունները կոնսպեկտում:

դ) Որոշել և կոնսպեկտում նշել պարապմունքի ամբողջ ընթացքի կազմակերպումը. այն է՝ պարապմունքի կազմակերպումը, պարապմունքի ընթացքում նրանց տեղաշարժման և տեղաբաշխման միջոցները՝ վարժությունների կատարման համար, պարապմունքի աշխատանքի կազմակերպման եղանակները, պարապմունքների նյութական հագեցվածությունը. ինչպիսի մարզագույք է անհրաժեշտ տվյալ պարապմունքի համար, մարզագործիքների տեղաբաշխման կարգը՝ համապատասխանեցված պարապմունքի տեղաբաշխման հետ, նշել մարզագործիքների տեղադրման ու հավաքման և մանր մարզագույքի բաշխման կարգն ու կազմակերպումը, որոշել պարապմունքի անվտանգության և վնասվածքների կանխարգելման մյուս միջոցների ապահովումը:

ե) Մշակել տնային առաջադրանքներ պարապմունքի համար: Պարապմունքների տեղի ու գույքի նախապատրաստումը՝ մարզագույքի սարքինության ստուգման և դրանց տեղաբաշխման մեջ է այնպիսի կարգով, որ հարմար լինի տվյալ դասի անցկացման համար:

Ամեն ինչ անհրաժեշտ է անել ժամանակին: Այն մարգագործիքները, որոնք չեն խանգարի տվյալ պարապմունքի անցկացմանը, հարկավոր է տեղադրել նախքան նրա սկսվելը:

Անհրաժեշտ է ստուգել պարապմունքի վայրի սանիտարական վիճակը օդափոխումը, շենքի մաքրման որակը և այլն:

Պարապմունքի վայրը հարկավոր է նախապատրաստել անմիջապես դասից առաջ, անձամբ ստուգել ամեն ինչ է համապատասխանում մշակված կոնսպեկտին:

Օգնականներին նախօրոք պետք է հրահանգավորել նրանց աշխատանքի բովանդակության մասին և ստուգել վարժություններ կատարելու նրանց ունակությունը, մեթոդական պատրաստվածությունը և ապահովման հմտությունները:

Եթե դասին նախորոշված է նոր վարժությունների ուսուցում, որոնք ուսուցիչն երկար ժամանակ չի կատարել, ապա դասին նախապատրաստվելիս նա պետք է գործնականորեն ստուգի տվյալ վարժությունների կատարման իր կարողությունները:

Դասին պատրաստվելիս ուսուցիչը պետք է մտածի իր արտաքին տեսքի մասին: Խորհուրդ է տրվում հագնել կոկիկ, համեստ, բոլոր վարժությունների կատարման համար հարմար մարգահագուստ:

Դասի մանկավարժական վերլուծումը

Ուսուցման և դաստիարակության տեսությունում մեծ ուշադրություն է դարձվում դասի մանկավարժական վերլուծմանը: Մանկավարժի գործունեությունը պետք է ուղղված լինի մանկավարժական գործընթացի որակի անընդհատ բարձրացմանը: Դրա համար յուրաքանչյուր դասը պետք է վերլուծել և գնահատել: Վերլուծությունը ուսուցման գործընթացի հսկման մեթոդ է համարվում: Մասնավորապես, վերլուծությունն անցկացնում է ուսուցիչը՝ պարապուղների վարքին, գործունեությանը և աշխատանքին հետևելու միջոցով:

Ֆիզիկական դաստիարակության պրակտիկայում լայն կիրառում են ստացել 1980 թվականի Ա.Մ. Դիկունովի կողմից մշակված և Ֆ.Գ. Ղազարյանի կողմից վերամշակված դասի մանկավարժական վերլուծման տարբերակը:

Վերլուծության հիման վրա ճշտումներ են մտցվում հետագա անցկացվելիք դասերում:

Սակայն խորը մանկավարժական վերլուծություն կարող է կատարվել միայն այլ անձի կողմից, որը չի մասնակացում դասին:

Դասի վերլուծության ժամանակ ընդգրկում են նրա բոլոր կողմերը: Նախ և առաջ վերլուծվում է ուսուցչի նախապատրաստումը դասին, գնահատվում է նրա պլանկոնսպեկտի որակը: Ուշադրություն է դարձվում դասի խնդիրների ճշտության վրա, ապա գնահատվում է վարժությունների ընտրությունը, որոնցով պետք է լուծվեն դասի խնդիրները, ինչպես նաև գնահատական է տրվում մեթոդական և կազմակերպական ցուցումներին: Այնուհետև գնահատվում են դասի անցկացման պայմանները և ուսուցչի կատարած աշխատանքն այդ ուղղությամբ:

Հիմնականում ուշադրություն պետք է դարձնել մանկավարժական գործընթացին: Գնահատման ենթակա են դասի կազմակերպական կողմերը: Պետք է հետևել դասի ժամանակին սկսմանն ու ավարտմանը:

Կարևոր է նկատել, թե ուսուցիչը կատարե՞լ է արդյոք դասի նախորոշված խնդիրները և ամփոփե՞լ է արդյոք անցկացված աշխատանքի արդյունքները:

Պետք է բացահայտել պարապոզների կարգապահությունը, օգտագործել առաջավորների պատրաստվածության աստիճանը: Անհրաժեշտ է գնահատել և վերլուծության ենթարկել ցուցադրումը՝ ուսուցչի բացատրությունների, հրամաններ տալու կարողությունը, օգնություն ցույց տալու և ճիշտ ապահովության ունակությունը:

Անհրաժեշտ է նաև բացահայտել պարապոզներին ղեկավարելու ունակությունը, վարժությունների անցկացման որակը և դասի անցկացման այլ հանգամանքներ, որոնք բնութագրում են ուսուցչի մանկավարժական փորձն ու հմտությունները: Անհրաժեշտ է հետևել մանկավարժի վարքին, արտաքին տեսքին, խոսքի և այլն:

Ցանկալի է անցկացնել դասի ժամանակաչափում, որի տվյալները թույլ են տալիս որոշել, թե որքանո՞վ է արդյունավետ օգտագործվել դասին հատկացված ժամանակը: Սակայն, միայն ժամանակաչափման օգտագործումը չի կարող ցույց տալ

դասի ամենազլխավոր գործոնը ուսուցչի և պարապոդի փոխազդեցության աստիճանը: Դրա համար ժամանակաչափումը ուղեկցվում է մանկավարժական դիտումներով: Վերլուծության եզրափակիչ փուլում պետք է գնահատել դասն ամբողջությամբ:

Վերլուծությունը հարկավոր է ավարտել մանկավարժական գործընթացի հետագա բարելավմանն ուղղված առաջարկություններով:

ԵԶՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ

Գրական աղբյուրների վերլուծությունը և անձնական ուսումնասիրությունները թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացություններին.

Ժամանակակից դասին բնորոշ զիծ պետք է համարել նրանում ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցների, մասնավորապես, համակարգչի օգտագործումը: Ներկա ժամանակաշրջանում լայնորեն պետք է քննարկել ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի աշխատանքում համակարգչի ներդրման հիմնախնդիրը:

Հանրակրթական դպրոցում ֆիզիկական կուլտուրայի մանկավարժական գործընթացի վերակառուցման կարևորագույն պայման պետք է համարել պարապմունքների ընթացքում համատեղ գործունեությունը, ուսուցման և դաստիարակության գործընթացի անցումը դեպի հումանիզացման և դեմոկրատացման սկզբունքների:

Հանրակրթական դպրոցում ճիշտ կազմակերպված ուսումնական աշխատանքը ուսուցչին կօգնի լավագույնս կերպով լուծելու առողջարարական, կրթական, դաստիարակչական խնդիրները: Եվ պատահական չէ, որ աշակերտների գործունեության կազմակերպման հիմնականն ու առաջատարը ֆիզիկական կուլտուրան է: Դասի որակից է կախված ֆիզիկական դաստիարակության համակարգի ամբողջ արդյունավետությունը դպրոցում:

Դասային պարապմունքների ձևերում ուսուցիչն ունի իր առաջատար դերը: Նա ուսումնական դասընթացի անմիջական կերտողն է, ստեղծում է բազմաթիվ

ուսումնադաստիարակչական իրավիճակներ, որոնք միջոցով հասնում է իր առջև դրված նպատակին:

Ուսուցչի գործունեության մեջ մտնում են դասի խնդիրների և նպատակների հաղորդումն ու պարզաբանումը, աշակերտների գործողություններին հետևելը, նրանց բեռնվածության և փոխհարաբերությունների կարգավորումը, վարքի կառավարումը և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դպրոցի չափորոշիչներ և ծրագիր
«Կրթական ծրագրերի կենտրոն», Առաքելյան Վ.Բ. և ուրիշներ, ԾԻԳ, 2009 թ.
2. «Ֆիզիկական կուլտուրա», ուսուցչի ձեռնարկ հանրակրթական դպրոցի 1-4 դասարանների համար / Վ.Բ. Առաքելյան, Ֆ.Գ. Ղազարյան, Յու. Գրիգորյան –
Եր.: «Աստղիկ գրատուն», 2008թ. – 184 էջ
3. Ռ.Ս. Մանուկյան, «Ֆիզիկական կուլտուրայի դասի մեթոդիկան»,
ուսումնական ձեռնարկ: Գյումրի: Դպիր., 2003 թ., 30 էջ
4. Ֆ.Գ. Ղազարյան, Ա.Ա. Գրիգորյան, «Ֆիզիկական դաստիարակության
տեսություն», ֆիզ. Կուլտ. Հայկական պետական ինստիտուտի տպարան, 2003
թ., 2-րդ հրատարակություն
5. Հ.Ե. Փարսադանյան, «Ֆիզիկական կուլտուրայի դասը դպրոցում», մեթոդական
ցուցումներ, Լենինական, 1973թ., 26 էջ